

## Աստղիկ Մովսիսյան

### ԷԶՄԻԱԾԻՆ-ԱՆԹԻԼԻԱՍ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴԻ ՓՈՒԼԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Բանալի բառեր - Ամենայն Հայոց կաթողիկոսություն, Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսություն, Երկիրեղկվածություն, միավորման փորձեր, հակականոնական որոշում, «Փուտքոլային դիվանագիտություն», սիրիական պատերազմ, սրբադասում:

Էջմիածին-Անթիլիաս հարաբերությունները անկախության շրջանում: Հայաստանի երրորդ Հանրապետության հիմնադրումը բեկումնային եղավ հայրենիքի և Սփյուռքի միջև սերտ ու բազմաշերտ հարաբերությունների հաստատման առումով: Նշանակալից ու ոգևորող էր հատկապես Սփյուռքի ավանդական կուսակցությունների՝ ՀՅԴ-ի, ՍԴՀԿ-ի, ՌԱԿ-ի վերադարձը հայրենիք: Վերջիններս 1990-ական թթ. սկսեցին ակտիվ գործունեություն ծավալել Հայաստանում՝ միաժամանակ պահպանելով իրենց կառույցներն ու դիրքերը սփյուռքյան համայնքներում: Անկախացումից հետո մի շարք սփյուռքյան բարեգործական, հասարակական, մշակութային, կրթական, երիտասարդական, սպորտային կազմակերպություններ բացեցին իրենց հայաստանյան մասնաճյուղերը: Աշխուժացած փոխադարձ շփումներն ու նախանշվեցին Հայաստան-Սփյուռք համագործակցության նոր ուղիներ:

ԽՍՀՄ վկուգումից, սառը պատերազմի ավարտից և Հայաստանի անկախության հաստատումից հետո թվում է, թե պետք է վերացվեին նաև բոլոր խոչընդոտները Ամենայն Հայոց և Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսությունների մերձեցման և նույնիսկ հնարավոր միավորման ձանապարհին, քանի որ պառակտման գործում ի սկզբանե շատ մեծ դերակատարում ուներ քաղաքական գործոնը: Բայց միավորումը տեղի չի ունենում մինչ օրս:

Անկախության հաստատման առաջին տարիներին Ամենայն Հայոց Վազգեն Ա և Մեծի Տանն Կիլիկիո Գարեգին Բ կաթողիկոսների ջանքերի և անձնական ներդրման շնորհիվ Աթոռների միջև հաստատվել էին բավականին ջերմ հարաբերություններ: Վազգեն Ա կաթողիկոսի գահակալության վերջում հաճախակի էին դարձել փոխայցելությունները, Մայր Աթոռում հավատացյալները սկսել էին հաճախ ունկնդրել Կիլիկիո կաթողիկոսի քարոզները<sup>1</sup>:

<sup>1</sup>Քալաշյան Ա., Էջմիածին-Անթիլիաս կամոնական միասնացման գործընթացների արդի փուլը (1988-2008թ.), Հայ աստվածաբան, Գիտական հոդվածների ժողովածու, Գ, Երևան, 2009, էջ 153:

1994թ. Վազգեն Ա կաթողիկոսի մահվանից հետո կաթողիկոսական նոր ընտրություններ անցկացնելու, Հայ առաքելական Եկեղեցու միասնությունը վերականգնելու հարցերը հայտնվեցին «Հ իշխանությունների ուշադրության կենտրոնում։ Եկեղեցու հանրեալ հետաքրքրությունը ակնհայտորեն աճեց Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինի մահից հետո՝ 1994թ., երբ առաջ Եկակ կաթողիկոսական ընտրություն անցկացնելու հարցը։ Նորաստեղծ պետությունը արդարացիորեն ակնկալում էր Եկեղեցու օժանդակությունը, ուստի և չէր կարող անտարբեր լինել այդ հարցում, առավել ևս՝ որ դարեր անց առաջին անգամ կաթողիկոս ընտրվելու էր ինքնիշխան Հայաստանում<sup>1</sup>։ Կաթողիկոսական ընտրություններում իբրև գլխավոր թեկնածու առաջարվեց Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Գարեգին Բ-ն՝ այս կերպ նպատակ հետապնդելով միավորել Հայ առաքելական Եկեղեցու երկու աթոռները։ Նրա թեկնածությանը առանձնահատուկ սատարում էր «Հեկավարությունը, և այդ թեմայով տրված հարցազրույցում «Հ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը նշում է. «... իր աստվածաբանական պատրաստությամբ, հայագիտական հմտությամբ և վարչական կարողություններով այսօր Ամենայն հայոց կաթողիկոսի ամենարժանի թեկնածուն, իմ կարծիքով, Կիլիկիո աթոռի հայրապետ Գարեգին Բ վեհափառն է... Այս ընտրությունը, Վստահ եմ, կարող է շրջադարձային դեր խաղալ Հայ առաքելական Եկեղեցու նվիրապետական միասնության վերականգնման, ինչպես նաև ավելի լայն առումով՝ Հայաստան-Սփյուռք հարաբերությունների կարգավորման հիրավի համազգային գործում»<sup>2</sup>:

«Հ նախագահը չթաքրեց իր այդ մտադրությունը նաև 1995թ. ս. Էջմիածնում գումարված ազգային-Եկեղեցական ժողովի ժամանակ։ Նա իր խոսքում մասնավորապես նշում էր, որ «Պատմությունը բացարիկ պատեհություն է ընձեռել՝ ձեռնարկելու Եկեղեցու միասնության վերականգնման համազգային գործը։ Եվ ես կարծում եմ, որ Ազգային-Եկեղեցական ժողովը չի կորցնի այս պատեհությունը։ Այլապես սերունդները մեզ չեն ների։ Եկեք ընդունենք, որ այն իրավիճակը, որ գոյություն ունի մեր Եկեղեցում, ես նկատի ունեմ նրա երկիրկանական գործում։ Ազգային խայտառակություն է»<sup>3</sup>։

1995թ. Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոս Գարեգինն Բ-ն ընտրվեց Ամենայն հայոց կաթողիկոս՝ Գարեգին Ա անվամբ։ Վերջինիս կաթողիկոսության շրջանում Աթոռների միջև շարունակվեցին բարիդրացիական հարաբերությունները, ինչը Գարեգին Ա կաթողիկոսին հնարավորություն տվեց 1996թ. դեկտեմբերին բարձրացնել երկու Աթոռների թեմական խնդիրների լուծման անհրաժեշտության հարցը։ 1997թ

<sup>1</sup>Մելքոնյան Ե., Հայաստանի Երրորդ Հանրապետության և Սփյուռքի քաղաքական փոխհարաբերությունների հարցի շուրջ, Սփյուռքագիտություն (տեսության և պատմության հարցեր), Տարեգիրք, Երևան, 2012, էջ 109։

<sup>2</sup>Նոյն տեղում։

<sup>3</sup>ՀՀ նախագահ տիար Լևոն Տեր-Պետրոսյանի խոսքը Ազգային-Եկեղեցական ժողովում, «Էջմիածն» ամսագիր, 1995, ապրիլ, էջ 53։

Եջմիածնում ստեղծվեց դիվան և հաստատվեց օրակարգային հիմնական հարցը՝ «Հայ Եկեղեցու միասնականության ամրապնդումը»<sup>1</sup>:

Չնայած գրանցած որոշակի հաջողություններին, այնուամենայնիվ պետք է փաստել, որ ջանքերն երկու աթոռների միավորման ուղղությամբ այդպես էլ որական արդյունքների չհանգեցրին:

Գարեգին Ա-ի մահվանից հետո կաթողիկոս ընտրվեց Արարատյան թեմի Հայրապետական փոխանորդ Գարեգին Ներսիսյանը՝ Գարեգին Բ անվամբ, ում օրոք երկու աթոռների միջև հարաբերությունները միանշանակ բնորոշում տալ հնարավոր չեն: Սկզբնական շրջանում շարունակվում էին դեռևս նախորդ կաթողիկոսի օրոք հաստատված բարեկամական հարաբերությունները: 2001թ. մեծ շուքով նշվեց Հայաստանում քրիստոնեությունը որպես պետական կրոն ընդունելու 1700-ամյակը, որին իրենց մասնակցությունը բերեցին բազմաթիվ սկյուռքահայեր: Նշանակալից էր հոգևոր-ազգային կյանքի իրատապ խնդիրներին ու մարտահրավերներին լուծումներ գտնելու մասին Գարեգին Բ-ի ելույթը. «Սրբագրենք մեր պատմութիւնը աղճատումներից ու շտկենք ժամանակների հակադրանքները: Ամենայն Հայոց եւ Մեծի Տան Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնների միջեւ տարածայնութիւնների հարթումով ձեռնամուխ լինենք Հայ Եկեղեցու ներքին բարեկարգութեանը, 2000-ամեայ քրիստոնէական ժառանգութեամբ գործուն մասնակցութիւն բերենք ազգերի, կրօնների ու Եկեղեցիների համեղբայրութեանը: Քայլենք Նուիրական մեր իղձերի իրականացման վճռականութեամբ՝ որպես մէկ Եկեղեցի, մէկ պետութիւն եւ ազգ»<sup>2</sup>:

Սակայն 2002-2003 թթ. ընթացքում Եջմիածին-Անթիլիաս հարաբերությունները բավականին լարվեցին, և 2002թ. մայիսին տեղի ունեցած Հայաստան-Սկյուռք Երկրորդ խորհրդաժողովին, որին մասնակցում էին նաև Մեծի Տան Կիլիկիոյ աթոռի ներկայացուցիչները, արդեն նկատելի էր որոշակի սառնություն: Այս մասին հուշում է նաև այն, որ Եջմիածնի պաշտոնաթերթը շատ սուղ տեղեկություններ է հաղորդում Արամ Ա-ի այցի մասին և դրանք չեն անցնում չոր տեղեկատվության սահմանը: Սրա պատճառը Կանադայում Եջմիածնի թեմին գուգահեռ անթիլիասապատկան թեմ բացելու Կիլիկիոյ կաթողիկոսության ծրագիրն էր<sup>3</sup>:

2003թ. արդեն Եջմիածին-Անթիլիաս հարաբերությունները մտան հակասության փուլ՝ կապված Կանադայում Կիլիկյան աթոռի կողմից թեմ հրչակելու որոշման հետ: Նույն թվականի հոկտեմբերին Ս. Եջմիածնում գումարված թեմական-ներկայացուցական ժողովին Գարեգին Բ-ն խստորեն դատապարտեց Անթիլիասի այս

<sup>1</sup>Արավել մանրամասն տես՝ Քալաշյան Ա., Եջմիածին-Անթիլիաս կանոնական միասնացման գործընթացների արդի փուլը (1988-2008թթ.), Հայ աստվածաբան, Գիտական հոդվածների ժողովածու, Գ, Երևան, 2009, էջ 153:

<sup>2</sup>Անտառայն Հայոց Վեհափառ Հայրապետի սրբատար կոնդակը Հայոց մեծ դարձի 1700-ամյան հորեյանի առիթով, «Եջմիածին» ամսագիր, 2001, հունվար, էջ 9:

<sup>3</sup>Տես՝ Հովհաննեսյան Հ., Մայր Աթոռ Ս. Եջմիածնի և Մեծի Տան Կիլիկիոյ կաթողիկոսությունների վերջին շրջանի հարբերությունների վերլուծություն, <http://www.religions.am/arm/articles>:

քայլն ու նման գործելակերպը համարեց ուղղակի սպառնալիք ՀՀ-ի ազգային անվտանգությանը: Կաթողիկոսի խոսքում մասնավորապես նշված է. «Միշտ կարևորել ենք ջերմ հարաբերությունները Նվիրապետական մեր Աթոռների ու թեմերի միջև: Այդուհանդեռձ, տեղ են գտել տարակարծություններ ու թյուրմբունումներ, նաև լարվածություն՝ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության կողմից Կանադայում հակականոնական թեմ հոչակելու առիթով: Ներկա աշխարհաքաղաքական բարդ իրավիճակում, երբ ազգովին լծված են հայրենի պետականության ամրապնդման նվիրական գործին, պարտք ի վերա մեր կա առաջնորդվել հայոց միաբանությունը չվտանգելու, մեր ժողովրդին նոր հուզումներից հեռու պահելու համակ պատասխանատվության գիտակցությամբ»<sup>1</sup>:

Երկամյա լարվածությունից հետո Էջմիածին-Անթիլիաս հարաբերություններում դրական տեղաշարժ եղավ միայն 2005թ. գարնանը, երբ Էջմիածնում տեղի ունեցավ կաթողիկոսությունների պատվիրակների խորհրդակցական ժողովը: «Հայ Եկեղեցւոյ սրբազն առաքելութեան առաւել ծաղման, ինչպէս նաև ներքին միասնականութեան առաւել ամրապնդման առաջադրանքով, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսի բարձր տնօրինութեամբ, 4-5 Մարտ 2005-ին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի մէջ, խորհրդակցական ժողով մը տեղի ունեցաւ Ամենայն Հայոց կաթողիկոսութեան եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան պատուիրակութիւններուն միջեւ, ընդհանուր ուղեգիծ ունենալով «Հայ Եկեղեցւոյ Վերանորոգութեան Հրամայականը» թեմայով օրակարգի նախագիծի պատրաստութեանը»<sup>2</sup>:

Նոր մարտահրավերներն ու Էջմիածին-Անթիլիաս հարաբերությունները նորագույն շրջանում: Ամենայն Հայոց և Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսությունների և առհասարակ Հայաստան-Սփյուռք հարաբերությունների համար լուրջ փորձաքար եղավ «ֆուտբոլային դիվանագիտությունը» և Հայաստանի ու Թուրքիայի միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման գործընթացը, ինչի արդյունքը եղան հայ-թուրքական արձանագրությունները:

2009 թ.հոկտեմբերի 10-ին Շվեյցարիայում տեղի ունեցավ Հայաստանի և Թուրքիայի արտգործնախարարների կողմից Հայ-թուրքական արձանագրությունների ստորագրան արարողությունը, որին ներկա էին ԱՄՆ-ի, ԵՄ-ի, ՌԴ-ի և Շվեյցարիայի արտաքին գերատեսչությունների ղեկավարները<sup>3</sup>:

<sup>1</sup>Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսի խոսք թեմական-ներկայացուցական հավաքին (Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 31 հոկտեմբերի), «Էջմիածին» ամսագիր, 2003, հոկտեմբեր-նոյեմբեր, էջ 8:

<sup>2</sup>Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան պատուիրակութիւններու ժողովի, «Հասկ» ամսաթերթ, ՀԴ տարի, 2005, մարտ, էջ 269:

<sup>3</sup> Արձանագրությունները տե՛ս <http://www.ararat-center.org/upload/files/Protocol-arm.pdf>:

Արձանագրությունների ստորագրումը հանդիպեց Հայկական սփյուռքի մի շարք ուժեղի դիմադրությանը: Սա այն սակավաթիվ դեպքերից էր, երբ հայկական ավանդական երեք կուսակցությունները հանդես եկան միասնաբար և խստորեն դատապարտեցին կատարվածը: ՀՅԴ-ն կոչ արեց համայն հայության՝ զինվել ինքնվստահությամբ եւ վճռականությամբ: «Մենք պարտավոր ենք համատեղ ուժերով բացառել այս արձանագրությունների վավերացումը՝ որանով իսկ չեզոքացնելով Հայաստանին ու հայությանը սպառնացող իրական վտանգները՝ հանուն Հայաստանի Հանրապետության, ազատագրված Արցախի, մեր ժողովրդի միասնականության եւ աշխարհում արժանապատիվ ապրելու մեր սերունդների իրավունքի», - նշվում է ՀՅԴ հայտարարության մեջ<sup>1</sup>:

Հայ-թուրքական արձանագրությունների վերաբերյալ հակադիր դիրքորոշումներ արտահայտեցին Ամենայն Հայոց և Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսությունները:

2009թ. սեպտեմբերի 30-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում տեղ ունեցավ Գերագոյն Հոգևոր Խորհրդի նիստ՝ Գարեգին Բ կաթողիկոսի նախագահությամբ: Գերագոյն հոգևոր Խորհրդը հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման խնդրի շուրջ տարածեց հայտարարություն, որով ողջունում էր Հայաստանի և Թուրքիայի միջև առանց նախապայմանների դիվանագիտական կապերի հաստատումն ու հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործընթացը: Այն ընդունելի էր համարում հայության մտահոգություններն այս հարցի շուրջ և վերահաստատում էր, որ Հայոց ցեղասպանությունը անվիճելի իրողություն է: Սկսված գործընթացում ս. Էջմիածինը աջակցում էր ՀՀ իշխանություններին: «Գերագոյն Հոգևոր Խորհրդը, - նշված է հայտարարության մեջ, - Տիրոջ զորակցությունն ու Սուրբ Հոգու աջակցությունն է հայցում Հայաստանի Հանրապետության իշխանություններին, որպեսզի բարեհաջող հանգրվանի առաջնորդեն հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործընթացը՝ հանուն մեր ժողովրդի նվիրական ու կենսական շահերի»<sup>2</sup>:

Արձանագրության ստորագրմանն անմիջապես արձագանքեց նաև Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսությանը: Վերջինիս պաշտոնաթերթ «Հասկ» ամսաթերթի 2010թ. սեպտեմբեր-հոկտեմբերի համարում լույս տեսավ «Համահայկական մարտահրաւերները համազգային մասնակցութեմաբ հարկ է դիմագրաւել» խորագրով հոդվածը, որում կաթողիկոս Արամ Ա-ն արտահայտեց Անթիլիասի պաշտոնական դիրքորոշումն այս հարցի շուրջ: Արամ Ա-ն մասնավորապես նշում էր, որ համազգային նշանակության այս հարցում Հայաստանի իշխանությունները պարտավոր են հաշվի առնել Սփյուռքի կարծիքը հնարավոր Երկարակությունից խուսափելու համար:

<sup>1</sup>ՀՅԴ-ն վճռական է հայ-թուրքական Արձանագրությունների վավերացման դեմ պայքարում, <http://www.panarmenian.net/arm/news/37529/>:

<sup>2</sup>Գերագոյն Հոգևոր Խորհրդի ժողովի հայտարարությունը հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործընթացի վերաբերյալ, «Էջմիածին» ամսագիր, 2009, սեպտեմբեր, էջ 14:

«Հայաստանին միայն առնչուած խնդիրներու եւ այդ գժով առնուելիք որոշումները,-նշում է կաթողիկոսը,- բնականաբար կը վերաբերի Հայաստանի պետութեան: Սակայն, համահայկական բնոյթ ունեցող հիմնահարցերը անհրաժեշտ է որ համահայկական մաշտաբով ու մասնակցութեամբ լուրջ քննարկումի ենթարկուին: Նման խնդիրներուն ու մարտահրաւերներուն մեր մօտեցումը պէտք է մեկնի համազգային գերագոյն շահերէն ու մեր ներքին միասնականութիւնը ամուր պահելու նախանձախնդրութենէն»<sup>1</sup>: Կարևորվում էր Հայոց ցեղասպանության հարցում պահանջատերի դիրքերում մնալու և այն քննարկման հարց չդարձնելու խնդիրը. «Ցեղասպանութեան ճանաչումը ու հասունացումը մեր ազգային պահանջատիրութեան առանցքներէն մէկն է: Հետեւաբար, ծայրայեղ աստիճանի զգուշավորութեամբ ու զգայունութեամբ հարկ է մօտենալ այս հարցին: Բնականաբար, Հայաստանը որպէս պետութիւն տարբեր մօտեցում պէտք է ունենայ ցեղասպանութեան ճանաչման ու ընդհանրապէս մեր ժողովուրդի արդար իրաւունքներու ծեռքբերման գործընթացին՝ բոլոր պարագաներուն առանց ցեղասպանութիւնը բանակցութեան նիւթի վերածելու»<sup>2</sup>:

Հայ-թուրքական արձանագրությունների ստորագրումով Եջմիածին-Անթիլիաս հարաբերությունները բավականին լարվեցին: Նրանց միջև հարաբերությունները փոքրիշտե կարգավորվեցին, երբ Հայաստանի Սահմանադրական դատարանը որոշակի վերապահումներ կատարեց արձանագրությունների վերաբերյալ: ՍԴ որոշման մեջ նշվում էր, որ ««Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատելու մասին» և «Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև հարաբերությունների զարգացման մասին» արձանագրություններում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը»<sup>3</sup>: Բայց այս որոշումն անվերապահ չէր, այլ ուներ որոշակի հստակ մեկնաբանություններ: Մասնավորապես, ՍԴ-ը գտել էր, որ արձանագրությունների դրույթները «չեն կարող մեկնաբանվել և կիրառվել այնպես, որ հակասեն Հայաստանի Սահմանադրության նախաբանի դրույթներին և Հայաստանի անկախության մասին հօչակագրի 11-րդ կետի պահանջներին»: Ըստ վերոհիշյալ կետի «Հայաստանի Հանրապետությունը սատար է կանգնում 1915 թվականին Օսմանյան Թուրքիայում և Արևմտյան Հայաստանում Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործին»:

<sup>1</sup>Համահայկական մարտահրաւելու համազգային մասնակցութեամբ հարկ է դիմագրաւել, «Հասկ» ամսաթերթ, ՀՀ տարի, 2009, սեպտեմբեր-հոկտեմբեր, թիւ 9-10, էջ 12:

<sup>2</sup>Նոյն տեղում:

<sup>3</sup> «Հայաստանի Սահմանադրական դատարանի որոշումը 2009 թվականի հոկտեմբերի 10-ին Ցյուրիխի քաղաքում ստորագրված «ՀՀ և Թուրքիայի Հանրապետության միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատելու մասին» և «ՀՀ և Թուրքիայի Հանրապետության միջև հարաբերությունների զարգացման մասին» արձանագրություններում ամրագրված պարտավորությունների Հայաստանի Սահմանադրությանը» արձանագրություններում, <http://www.concourt.am/armenian/decisions/common/2010/pdf/sdv-850.pdf>:

Իսկ մի փոքր ուշ՝ 2010թ. ապրիլի 22-ին, ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը հայտարարեց արձանագրությունների վավերացման առկախման ՀՀ որոշման մասին։ Այս ամենը հույս ներշնչեց, որ ՀՀ-ն աստիճանաբար իրաժարվելու է նաև արձանագրությունները, ինչը և տեղի ունեցավ 2015թ.։ Սա արտաքին քաղաքականության առումով մեծ նշանակություն չունեցավ, քանի որ առանց այդ էլ գործընթացը սարեցված էր, բայց այն մեծ նշանակություն ունեցավ Հայաստան-Սփյուռքի հարաբերությունների սերտացման, Եջմիածին-Անթիլիաս հարաբերությունների կարգավորման համար։

2011 թ. մարտին Սիրիայում բռնկվեց քաղաքացիական պատերազմ, ինչը ուղղակի վտանգ էր տեղի հայ համայնքի գոյության համար։ Վերջինիս անվտանգությունն ապահովելու, կարիքավորներին բազմապիսի օժանդակություն տրամադրելու նպատակով Ամենայն Հայոց և Մեծի Տան Կիլիկիո կաթողիկոսություններն արդեն հանդես եկան միասնաբար։

Մեծի Տան Կիլիկիո կաթողիկոս Արամ Ա-ն կոչ արեց աշխարհասկյուռ հայությանը միավորել իրենց ուժերը սիրիահայությանը օժանդակելու ուղղությամբ։ «Սուրբահայ գաղութը, - նշում էր կաթողիկոսի հայտարարությունում, - պատմական գաղութ է, կազմակերպ ու աշխոյժ գաղութ է ու յատուկ կարեւորութիւն կը ներկայացնէ թէ՝ Հայաստանի, թէ՝ Սփյուռքի եւ թէ մեր պահանջատիրութեան համար։ Հետեւաբար, անոր կազմակերպ ու կենսունակ պահպանումը համահայկական խնդիր է»<sup>1</sup>։

Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ն Ս. Եջմիածնում գումարված թեմական ներկայացուցչական ժողովում անդրադարձավ սիրիահայությանը օժանդակելու խնդրին և նշեց. «Այսօր համայն մեր ժողովոդի հայացքը տագնապով ուղղված է Սիրիա, որտեղ պատերազմական իրավիճակի բոլոր դժվարությունները կրում է նաև հայ համայնքը։ Սիրիաբնակ մեր զավակները կարիք ունեն շտապ և մեծ օգնության և սատարումի»<sup>2</sup>։ Իր խոսքում կաթողիկոսը նշեց, որ Մայր Աթոռը Դամասկոսի թեմին փոխանցել է դրամական օգնություն և հույս հայտնեց, որ թեմերից ակնկալվող օժանդակության ստացումով կկարողանան ավելի մեծ գումար փոխանցել։

2013թ. հունվարին, ամփոփելով սիրիահայության օժանդակման ուղղությամբ կատարված աշխատանքները՝ Ազգային կենտրոնական վարչության ժողովի ժամանակ Արամ Ա-ն իր շնորհակալական խոսքում նշում էր նաև Ամենայն Հայոց կաթողիկոսությանը։ «Վեհափառ Հայրապետը իր գնահատանքն ու շնորհակալութիւն յայտնեց մեր բոլոր թեմերուն, ինպէս նաեւ Հայաստանի պետութեան, Ամենայն Հայոց կաթողիկոսութեան եւ այն բոլոր գաղութներուն, կազմակերպութիւններուն եւ անհատ

<sup>1</sup> Սուրբահայութեան օգնութիւնը համահայկական առաջնահերթութիւն է, «Հայկ» ամսաթերթ, ԶԱ տարի, 2012, օգոստոս, թիւ 8, էջ 13։

<sup>2</sup> Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում գումարվեց թեմական ներկայացուցչական ժողով, «Էջմիածին» ամսագիր, 2012, նոյեմբեր, 139։

ազգայիններուն, որոնք օժանդակած էին Սուրբահայութեան վերականգնումի աշխատանքներուն»<sup>1</sup>:

2013թ. սեպտեմբերի 24-ին տեղի ունեցավ աննախադեալ մի իրադարձություն, երբ Մայր Աթոռ ս. Էջմիածնում հրավիրվեց Հայ առաքելական Եկեղեցու Եպիսկոպոսաց ժողով, որին մասնակցեցին Անթիլիասի Եպիսկոպոսները՝ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Արամ Ա-ի գլխավորությամբ։ Այն ոչ միայն Երկու աթոռների միջև բարեկամական հարաբերությունների հաստատման նոր փուլ էր, այլև կարևոր նշանակություն ունեցավ Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին ընդառաջ։ Եպիսկոպոսաց ժողովի տարածած հաղորդագրության մեջ նշվում էր. «Սեպտեմբերի 24-ի նիստերին Եպիսկոպոսաց դասը քննարկեց Հայաստանյաց Առաքելական Ս. Եկեղեցում սրբադասման ավանդության վերականգնման հարցը և այդ շրջագծում Հայոց ցեղասպանության գոհերի սրբադասման խնդիրը»<sup>2</sup>։ Ժողովում անդրադարձ կատարվեց Եկեղեցուն հուզող այլ խնդիրներին ևս, շեշտվեց բարեփոխումներ կատարելու անհրաժեշտությունը։

2015թ. լրացավ Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցը, և Մայր Աթոռ Ս. Էջմիածնում տեղի ունեցավ Հայոց ցեղասպանության գոհերի սրբադասման արարողություն։ «Ապրիլի 23-ին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում՝ Ս. Տրդատի բաց խորանին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Շայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի և Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսի հանդիսապետությամբ կատարվեց Հայոց Ցեղասպանության նահատակների սրբադասման արարողությունը»<sup>3</sup>։ Հայ ժողովորդի համար այսքան կարևոր ու նշանակալից այս արարողությանը Հայ առաքելական Եկեղեցու Երկու աթոռների համատեղ մասնակցությունը խորհրդանշական էր ու ոգևորող։

Ամփոփելով կատարած Վերլուծությունը՝ կարող ենք նշել, որ Հայաստանի անկախացումը բեկումնային եղավ Էջմիածին-Անթիլիաս հարաբերությունների սերտացման առումով, աշխուժացան փոխադարձ շփումները։ Բայց և այնպես Աթոռների միջև առկա տարածայնությունները ամբողջովին չլուծվեցին, ապարդյուն եղան նրանց միավորմանն ուղղված ջանքերը։ Եղել են Աթոռների միավորման մի քանի փորձեր ու չնայած այն բանին, որ ՀՀ-ն այլևս անկախ պետություն է, ԽՍՀՄ-ն փլուզվել է և դրանից ելնելով Էջմիածնին արդեն հնարավոր չէ խորհրդային ազդեցությունը տարածողի պիտակ փակցնելը, ու չնայած Եկեղեցական ծիսական տարբերություններ բացարձակապես չկան Երկու Աթոռների միջև, այնուհանդերձ

<sup>1</sup>Սուրբահայութեան աջակցութիւնը առաջնահերթ տեղ գրաւեց Անթիլիասի Մայրավանքին մեջ տեղի ունեցած Ազգ. Կեդր. վարչութեան և առաջնորդներու համայնքամին, «Հայոց» ամսաթերթ, հունվար, 2013, էջ 83։

<sup>2</sup>Հաղորդագրություն Մայր Աթոռ Ս. Էջմիածնում գումարված Հայաստանյաց Առաքելական Ս. Եկեղեցու Եպիսկոպոսաց ժողովի, «Էջմիածին» ամսագիր, 2013, սեպտեմբեր, էջ 70։

<sup>3</sup>Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում տեղի ունեցավ Հայոց ցեղասպանության նահատակների սրբադասման արարողությունը, <http://www.armenianchurch.org/index.jsp?sid=3&nid=2859&y=2015&m=3&d=23>։

միավորման գործընթացը տեղի չի ունենում, և դրա պատճառը, կարծում ենք, այն է, որ կողմերից և ոչ մեկը չի ցանկանում ընդունել մյուսի գերակայությունը և առավել ևս հրաժարվել այն իշխանությունից, որը ձեռք է բերվել անցած տասնամյակների ընթացքում պայքարի գնով։ Պայմանավորված քաղաքական իրավիճակների փոփոխություններով, կուսակցությունների որոշումներով, տարբեր կաթողիկոսների այս հարցում ունեցած դիրքորոշումներով՝ Աթոռների միջև հարաբերությունները երբեմն խիստ լարվել են, իսկ երբեմն էլ ուենցել են բարեկամական բնույթ։ Չնայած առկա բոլոր տարածայնություններին՝ երկու աթոռներն էլ հայ ժողովողի համար ձակատագրական պահերին ցուցաբերել են համագործակցելու պատրաստակամություն։ Պետք է փաստել, որ Վերջին տարիներին Աթոռների միջև ձևավորվել է համերաշխության ու փոխվստահության մթնոլորտ։

**Астхик Мовсисян, Из современной истории отношений между Эчмиадзином и Антилиасом.**- В статье рассматриваются вопросы взаимоотношений между Антилиасом и Эчмиадзином с начала формирования третьей Республики Армения до наших дней. Несмотря на то, что роль политического фактора была огромной в вопросе раскола Армянской Апостольской Церкви, крах советской системы и провозглашение независимости Республики Армения не решили эту проблему. В статье подчеркиваются внешние и внутренние вызовы, которые влияют на развитие взаимоотношений между двумя Патриаршествами.

**Astghik Movsisyan, From the modern history of Etchmiadzin-Antelias relationship –** The article investigates the issues of relationship between Etchmiadzin and Antelias from the beginning of the third Armenian Republic formation up today. Despite the fact that the political factor's role was huge in disruption of the Armenian Apostolic Church, the collapse of Soviet Union and the declaration of independence didn't solve this issue. The article emphasizes the external and internal challenges that affected the development of the relationship between the two Catholicoses.

**Աստղիկ Մովսիսյան-** ԵՊՀ պատմության ֆակուլտետի սիյուռքագիտության ամբիոնի մագիստրոս։